ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2025թ. նոյեմբերի 5-8-ը Ղազախստանի Հանրապետություն /Աստանա/ կատարած գործուղման արդյունքների մասին

1.Անունը,ազգանունը, զբաղեցրած պաշտոնը՝

Ստեփան Մնացականյան, ՀՀ վիճակագրական կոմիտեի նախագահ

2. Գործուղման վայրը և ժամկետները՝

Ղազախստանի Հանրապետություն (Աստանա), 2025թ. նոյեմբերի 5-8-ը

3.Հրավիրող կողմը՝

Ղազախստանի Հանրապետության ռազմավարական պլանավորման և բարեփոխումների գործակալության ազգային վիճակագրության բյուրո

4.Գործուղման նպատակը՝

Մասնակցել «Ազգային վիճակագրական համակարգերի թվային վերափոխում» խորագրով միջազգային ֆորումին: Ֆորումը կազմակերպվել էր Ղազախստանի Հանրապետության ռազմավարական պլանավորման և բարեփոխումների գործակալության ազգային վիճակագրության բյուրոյի կողմից՝ ԱՊՀ Միջպետական Վիճակագրական Կոմիտեի հետ համագործակցությամբ:
Ֆորումը հանդիսանում էր հիմնական միջոցառումներից մեկը՝ նվիրված Ղազախստանի պետական վիճակագրության պատմության մեջ կարևոր հանգրվանին՝ ազգային վիճակագրական գործակալության հիմնադրման 105-ամյակին:
Երկօրյա ֆորումի նպատակն էր ընդլայնել գիտելիքները և կիսվել փորձով՝ արագ զարգացող թվային դարաշրջանում ամբողջական տեղեկատվական տվյալների էկոհամակարգի բարելավման և ստեղծման համար՝ բացահայտելով տվյալների ոչ ավանդական աղբյուրների և նոր տեխնոլոգիաների ներուժը՝ ապագայի համար նորարարական լուծումներ ստեղծելու համար:
Ֆորումը նախատեսված էր ազգային վիճակագրական ծառայությունների ղեկավարների և աշխատակիցների, այլ պետական մարմինների պետական ծառայողների, միջազգային կազմակերպությունների հետազոտողների և փորձագետների, ինչպես նաև բիզնեսի և մասնավոր հատվածի ներկայացուցիչների համար:

5.Քննարկված թեմաները՝

1. Ազգային վիճակագրական համակարգերի թվային վերափոխում
2. Տվյալների որակը և դրա աճող արժեքը ժամանակակից աշխարհում (տվյալների արժեքային շղթա)
3. Մեծ տվյալների ներուժի օգտագործումը պաշտոնական վիճակագրության մեջ
4. Արհեստական բանականության տեխնոլոգիաների կիրառումը պետական կառավարման մեջ
5. Վստահություն փոխազդեցության միջոցով. հաղորդակցություն օգտատերերի և արտադրողների հետ:

6.Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը՝

Հայաստանը «Տվյալների որակը և դրա աճող արժեքը ժամանակակից աշխարհում» թեմայով պանելային քննարկմանը ներկայացրեց «Մոդեռնիզացման գործիքների կիրառումը Արմստատում» խորագրով շնորհանդես:
Շնորհանդեսի շրջանակում Արմստատը ներկայացրեց իր փորձը՝ կապված որակի կառավարման հետ, մասնավորապես 140 վիճակագրական արտադրանքների համար որակի հռչակագրերը, կիրառվող հետևյալ մոդեռնիզացման մոդելները և ստանդարտները՝ Ընդհանուր վիճակագրական բիզնես-գործընթացի մոդելը (GSBPM), Վիճակագրական կազմակերպությունների ընդհանուր գործունեության մոդելը (GAMSO), ԵՄ Միասնական ինտեգրված մեթատվյալների կառուցվածքը (SIMS) և որակի հաշվետվության ձևաչափերը (Եվրոպական Վիճակագրական տվյալների և մեթատվյալների փոխանակման ստանդարտով (SDMX) մեթատվյալների կառուցվածքը (ESMS) և Որակի հաշվետվությունների կառուցվածքի համար Եվրոպական վիճակագրական համակարգի ստանդարտը (ESQRS)): Անդրադարձ կատարվեց հետագա անելիքներին ևս, այն է՝ Ընդհանուր վիճակագրական տեղեկատվության մոդելի (GSIM) ներդրման աշխատանքներին: Տեղեկացվեց նաև, որ 2025թ. նոյեմբերի 25-ից 27-ը Երևանում նախատեսվում է վերապատրաստման դասընթաց GSIM-ի գծով ՄԱԿ-ի Եվրոպայի տնտեսական հանձնաժողովի, Ֆրանսիայի և Իտալիայի ազգային վիճակագրական ծառայությունների փորձագետների կողմից:
Ֆորումին քննարկվեցին պաշտոնական վիճակագրության մոդեռնիզացման հետ կապված արդիական հարցերը և տեխնիկական ենթակառուցվածքների ու վիճակագրական գործընթացների, ինչպես նաև մարդկային ռեսուրսների վերափոխման անհրաժեշտությունը, ներկայացվեցին համատեղ լուծումներ աճող մարտահրավերների և հնարավորություններ սպառողների կարիքները բավարարելու համար:

7.Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը՝

Հանդիպման գլխավոր ուղերձն էր՝ շարունակել համագործակցությունն՝ ուղղված ներգրավվածության միջոցով պաշտոնական վիճակագրության հանդեպ վստահության կառուցմանը, սպառողների և արտադրողների հետ հաղորդակցության ամրապնդմանը:
Կարևորվեց նաև այլընտրանքային աղբյուրների ներուժի օգտագործումը պաշտոնական վիճակագրության մեջ:
Հատուկ ուշադրություն դարձվեց մասնագիտական վիճակագրական հանրության հզորացմանն ուղղված աշխատանքներին, վիճակագրությունում մասնագիտական կարողությունների զարգացմանը:

8. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները՝

Մասնակցությունը ֆորումին հնարավորություն ընձեռեց վիճակագրական գրասենյակներին, տարածաշրջանային և միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչներին, հետազոտողներին, փորձագետներին և պետական գործակալություններին կիսվել ռազմավարություններով և լավագույն փորձով՝ ուժեղ տվյալների էկոհամակարգ կառուցելու գործում, ինչպես նաև կարծիքներ փոխանակել քննարկումների ընթացքում:
Ֆորումը, որպես վիճակագրական լավագույն փորձի փոխանակման կարևոր հարթակ, հնարավորություն ընձեռեց ազգային վիճակագրական ծառայությունների ներկայացուցիչներին քննարկել վիճակագրության առջև ծառացած մարտահրավերները, համագործակցության ուղիները և ազգային վիճակագրական համակարգերի հետագա զարգացմանն ուղղված գործողությունները:

9.Ստորագրությունը, ամսաթիվը՝

ՀՀ վիճակագրական կոմիտեի նախագահ Ստեփան Մնացականյան

10. 11. 25թ.

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԾԱԽՍԵՐԻ ՎԵՐՋՆԱՀԱՇՎԱՐԿԻ ՄԱՍԻՆ

1. Մարմնի անվանումը - ՀՀ վիճակագրական կոմիտե

2. Գործուղման մասին իրավական ակտի համարը - Հայաստանի Հանրապետության Վարչապետի 21.10.25թ. թիվ N 949 - Ա որոշում

3. Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը (մասնագիտությունը)

Ստեփան Մնացականյան – Հայաստանի Հանրապետության վիճակագրական կոմիտեի նախագահ

(թվարկել՝ պատվիրակություն գործուղելու դեպքում)

4. Գործուղման վայրը – Ղազախստանի Հանրապետություն (Աստանա)

5. Գործուղման ժամկետները՝ 2025թ. նոյեմբերի 5-8-ը

6. Գործուղման ծախսերի ֆինանսավորման աղբյուրը

1) հրավիրող կողմի միջոցների հաշվին հատուցվող ծախսերը - ԱՊՀ Միջպետական Վիճակագրական Կոմիտե

(թվարկել՝ ճանապարհածախս, գիշերավարձ, օրապահիկ և այլն)

ճանապարհածախս, գիշերավարձ

---

2) պետական բյուջեի միջոցների հաշվին հատուցվող ծախսերը
(ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2335-Ն որոշմանը համապատասխան)
(ընդգծել ծախսերի փոխհատուցման տարբերակը)

☐ ա. փաստացի կատարված ծախսերը հիմնավորող փաստաթղթերի հիման վրա՝ դրանցով սահմանված չափով, բայց ոչ ավելի, քան ցանկով նախատեսված չափերը

☐ բ. գործուղման անհատական իրավական ակտով տվյալ գործուղման փաստացի կատարված ծախսերի հատուցման պահանջի համաձայն

Ծախսի տեսակը	Անուն, ազգանուն	Անուն, ազգանուն	Անուն, ազգանուն	Անուն, ազգանուն	Ընդամենը (հազ. դրամ)

		1	2	3	...	
Ճանապար-հածախս	Ավիածառայության տեսակը (էկոնոմ դաս, բիզնես դաս)					
	Ավիատոմսի արժեքը (դրամ)					
Գիշերավարձ	Վճարը 1 օրվա համար (արտարժույթով)					
	Վճարը 1 օրվա համար (դրամ)					
	Օրերի քանակը					
	Ընդամենը (դրամ)					
Օրապահիկ	Վճարը 1 օրվա համար (արտարժույթով)					
	Վճարը 1 օրվա համար (դրամ)					
	Օրերի քանակը					
	Ընդամենը (դրամ)					
Այլ ծախսեր	Հակահամաճարակային նմուշառումների վճար					
	Մուտքի արտոնագրի վճար					
	Այլ ծախսեր (նկարագրել)					
Ընդամենը ծախսեր (հազ. դրամ)						

Գլխավոր ֆինանսիստի ստորագրությունը, ամսաթիվը

Գլխավոր քարտուղար Ա. Հայրապետյան

10.11.25